Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունվարի 20 -ի N 2 - Ա
որոշման

«ՄԱՅՐԱՏՈՒՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է ցուցաբերել սոցիալական, առողջապահական և հոգեբանական աջակցություն հասարակության ամենախոցելի խմբերին, ինչպես նաև նպաստել նրանց մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը: 1. Բոլոր տեսակի բռնության ենթարկված անօթևան կանայք, ովքեր ունեն մինչև 10 տարեկան երեխա (երեխաներ): 2. Հոգիներ, ովքեր չունեն ապաստան և պաշտպանության կարիք ունեն:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում ՀՀ օրենքով սահմանված կարգով նախատեսվում է օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի քաղաքացիներ, Կալիֆոռնիա նահանգի Սիլ Բիչ քաղաքի բնակիչներ, ամերիկահայ բարեգործներ՝ տեր և տիկին Ղազարյանները և նրանց ընտանիքը՝ Սեթա-Յունիս Ղազարյան Ենովքի (անձնագրի № AA0002802, տրված՝ 21.10.2013 թ., 02-ի կողմից) և Զուրաբ-Բարսեղ Ղազարյան Բարսեղի (անձնագրի № AA0002801, տրված՝ 21.10.2013 թ., 02-ի կողմից)
4.	Ծրագիրը կատարողը	«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ, իրավաբանական հասցե՝ քաղ. Երևան, Չարենցի 58-5, գործող հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Պտղունք, Վարդանանց 1, հեռ.՝ 043 500 503, 0 դրամ սակագնով թեժ գիծ՝ 20-80, ՀՎՀՀ՝ 01557357
5.	Ծրագրի իրականացման վայրը	ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Պտղունք, Վարդանանց 1 Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	122300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ

7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ-ում բնակվող՝ 1. բոլոր տեսակի բռնության ենթարկված անօթևան կանայք, ովքեր ունեն մինչև 10 տարեկան երեխա (երեխաներ). 2. հղիներ, ովքեր չունեն ապաստան և պաշտպանության կարիք ունեն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թ. հունվարի 1-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Մայրատուն» ծրագրի շրջանակներում շահառուները կարող են ապաստան գտնել ՀՀ Արմավիրի մարզի Պտղունք գյուղի Վարդանանց 1 հասցեում գտնվող՝ հիմնադրամին պատկանող շենքում: Ապաստանում կարող են բնակություն հաստատել բռնության ենթարկված և անօթևան հղիներ ու կանայք, ովքեր ունեն մինչև 10 տարեկան երեխա (երեխաներ): Մայրատանը նրանք ստանում են՝ 1. մոր և երեխայի համար նախատեսված սենյակ (անվճար). 2. 4-անգամյա սնունդ, 16000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 3. ներմուծում արտերկրից՝ հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է մորն ու մանկանը 82000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Ծրագիրն ունի նաև դաստիարակչական նպատակ, որի իրականացման համար ծառայում են հիմնադրամի համակարգչային սենյակը, խաղասենյակը, կարի սենյակը, ֆիլմերի ցուցադրման համար նախատեսված սենյակը, մարզասրահը, մատնահարդարի և վարսահարդարի սենյակները (նշված ծառայություններն անվճար են): 2020 թ. հունվարի 1-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը կազմակերպական ծախսերը կազմում են 24300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որից՝ - կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ 8000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, - հեռախոսային և ինտերնետային ծառայություններ՝ 1000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, - հոգեբանի անվճար ծառայություն (հոգեբանի աշխատավարձը հոգում է հիմնադրամը) 6000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ հարկերը, - գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ 9300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Նշված միջոցառումներն իրականացվելու են 2020 թ. հունվարի 1-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2020 թ. հունվարի 1-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը ծրագիրն իրականացնելու համար նախատեսվում է՝ 1. սննդի ձեռքբերում՝ ՀՀ տարածքում՝ 16000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 2. ներմուծում արտերկրից՝ հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է մորն ու մանկանը՝ 82000 ԱՄՆ-ի դոլարին համաժեք դրամ. 3. կոմունալ ծառայությունների ձեռքբերում (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ 8000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 4. հեռախոսային և ինտերնետային ծառայությունների ձեռքբերում՝ 1000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 5. հոգեբանի անվճար ծառայություն (հոգեբանի աշխատավարձը հոգում է հիմնադրամը)՝ 6000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, ներառյալ՝ հարկերը. 6. գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ 9300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:
11.	Կազմակերպական ծախսեր	2020 թ. հունվարի 1-ից մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը կազմակերպական ծախսերը կազմում են 24300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ 1. կոմունալ ծախսեր (գազ, էլեկտրաէներգիա, ջուր)՝ 8000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 2. հեռախոսային և ինտերնետային ծառայություններ՝ 1000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 3. հոգեբանի անվճար ծառայություն (հոգեբանի աշխատավարձը հոգում է հիմնադրամը)՝ 6000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ. 4. գրասենյակային ծախսեր և գույքի ձեռքբերում՝ 9300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - ՀՀ ոստիկանություն - ՀՀ առողջապահության նախարարություն - տեղական հասարակական, բարեգործական կազմակերպություններ, հիմնադրամներ, համայնքներ և թաղապետարաններ, մարզպետարաններ - ՀԿ-ներ, որոնք առնչվում են ընտանեկան բռնության և ընտանեկան համակարգի հետ

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	- Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ներկայացում հիմնադիր-գործադիր տնօրենին և հոգաբարձուների խորհրդին - ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում՝ լիազոր մարմնին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ